

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

25.06. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Ա. Չիլինգարյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Ա. Շարոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Ռ. Ասլանյան (*Բիզնես ռեզիստրի բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*), Ն. Մուշեղյան (*Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնի պետ*), Ս. Ներսիսյան (*Մարդահամարի վարչության պետ*), Ա. Կարապետյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում՝ վեց հարց.

1. Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Վ. Դավթյան/
2. Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տեղեկանք-հարցաթերթը և Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող տեղեկանք – հարցաթերթի լրացման Հրահանգը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Ա. Շարոյանը/
3. Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման ընտրանքային եղանակների կիրառման հայեցակարգին հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ա. Շարոյանը/
4. Հիմնական և ոչ հիմնական գործունեության տեսակների որոշման կանոններին հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ա. Շարոյանը/
5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
 - 5.1 Հաշվետվություն 2001թ. ապրիլի 28-ից մայիսի 16-ը Թեիրանում (Իրան) կայացած «Ընտրանքի մշակում և կիրառում» թեմայով սեմինարի վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/
 - 5.2 Հաշվետվություն TACIS ծրագրի «Հրապարակումներ և տարածում» նախագծի շրջանակում ք. Թբիլիսի 2001թ. ապրիլի 30-ից մինչև մայիսի 4-ը կայացած ուսումնական այցելության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Ն. Մուշեղյան/
 - 5.3 Հաշվետվություն 2001թ. մայիսի 14-18-ը TACIS ծրագրի «Մարդահամար» նախագծի շրջանակում Հյուսիսային Իռլանդիայի NI-CO կազմակերպություն կատարած այցելության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ս. Ներսիսյան/

5.4 Հաշվետվություն 2001թ. մայիսի 15-16-ը Լյուքսեմբուրգում կայացած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և նորանկախ պետությունների ու Մոնղոլիայի միջև «TACIS» ծրագրի շրջանակում վիճակագրության բնագավառում համագործակցության գծով կառավարող խմբի 7-րդ նիստի և մայիսի 17-18-ը TACIS –ի «Ռ-ազմավարական մենեջմենթ և ռազմավարական մտածողություն» խորագրով սեմինարի, ինչպես նաև սպառողներին վճարովի ծառայությունների մատուցման գծով մայիսի 21-27-ը Դանիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

5.5 Հաշվետվություն 2001թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 1-ը Բոռնմուրում կայացած անգլերեն լեզվի ուսուցման դասընթացին մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Կարապետյան/

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց համապատասխան փոփոխությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Վ. Դավթյան/

Նշվեց, որ, ՀՀ ՎՊԽ քննարկմանը ներկայացված Կարգի հիմնական նպատակն է սահմանել վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման, օգտագործման և հրապարակման կարգը, վիճակագրական գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – 10 կետում հարկ է կատարել հետևյալ լրացումները՝ «կոմիտե» բառից հետո փակագծերում ավելացնել «աշխատանքային խումբ» բառերը, պարբերության վերջում ավելացնել համապատասխան ձևակերպում ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից կոմիտե ստեղծելու և վերջինիս աշխատակարգը հաստատելու մասին.

Որոշեցին՝

Հաստատել «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգ»-ի, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Առաջարկել ՀՀ ՎՊԽ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով անդամին «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգ»-ի սահմանված կարգով պետական գրանցումից հետո ՀՀ ԱՎԾ նախագահի հաստատմանը ներկայացնել Կոմիտեի անհատական կազմի ցուցակը և Կոմիտեի աշխատակարգը:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տեղեկանք-հարցաթերթը և Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող տեղեկանք – հարցաթերթի լրացման Հրահանգը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Շաբոյանը/

Նշվեց, որ տեղեկանք – հարցաթերթը նախատեսված է բիզնես ռեզիստրի համար ուղղակի և անուղղակի աղբյուրներից անհրաժեշտ տվյալներ հավաքագրելու և արդեն իստ առկա տեղեկատվությունը արդիականացնելու նպատակով:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – 12 կետում արձանագրված աշխատելու պահին հարցաթերթը լրացնելու պահանջը որքանով է ապահովում ամբողջական տեղեկատվության ստացումը տվյալ կազմակերպության մասին:

Ա. Շաբոյան - հարցաթերթով ստացվելու են նաև այլ հարակից տեղեկություններ, որոնք լրացնելու են տեղեկատվության բացը:

-8 կետում կատարել փոփոխություն՝ հաշվետու տարվա ընթացքում իրականացված գործունեության տեսակները:

-հարցաթերթի դիմային մասում շարադրանքը փոխարինել հետևյալ բովանդակությամբ. «Վիճակագրական տվյալները համարվում են գաղտնի (այսուհետ՝ վիճակագրական գաղտնիք) ... Տվյալները, որոնք հասանելի են հանրությանը այլ աղբյուրներից վիճակագրական գաղտնիք չեն համարվում: Վիճակագրական գաղտնիք համարվող տվյալները, առանց դրանց ներկայացնողների համաձայնության հրապարակման կամ այլ ձևով տարածման ենթակա չեն: ... Տեղեկությունների չհրապարակման կամ այլ ձևով չտարածման դրույթը չի գործում այն դեպքում, երբ դրանք հանդիսանում են բնական կամ այլ մենաշնորհային գործունեությունն արտացոլող տեղեկություններ...»:

Ա. Չիլինգարյան – Ընդհանուր դրույթներ մասի 7-րդ պարբերության մեջ հարկ է կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝ «Այո» բառից հետո դնել վերջակետ, մյուս նախադասության մեջ գրել. ««Այո» գրել միայն այն կետերի դիմաց, որոնց մասով համաձայն եք» բառերը:

-հարցաթերթի վերևում վերնագրից հետո հարկ է ավելացնել «200-ի թվականի արդյունքներով» բառերը:

- «տրամադրվեն» բառից հետո հարկ է ավելացնել «ՀՀ ԱՎԾ կողմից» բառերը:

- *-ով արձանագրված ձևակերպումը առ այն, որ ծածկագրերը գրվելու են վիճակագիրների կողմից - ինչպես է ողջ հանրապետության համար իրականացվելու այդ աշխատանքը:

- ինչպես են միմյանց հարաբերում կազմակերպության գործելու փաստը և «լրացնելու պահին» հասկացությունը, հարկ է առավել հստակեցնել լրացման ժամկետի ձևակերպումը:

Հ. Պետրոսյան – խմբագրական բնույթի դիտողություններ

Ս. Մնացականյան – հետաձգել հարցի քննարկումը, առաջարկել զեկուցողին ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հետ կապված կազմակերպել լրացուցիչ քննարկումներ և լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ ՎՊԽ հաստատմամբ:

Որոշեցին՝ հաշվի առնելով քննարկման ընթացքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հետաձգել «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տեղեկանք-հարցաթերթը և Իրավաբանական

անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող տեղեկանք – հարցաթերթի լրացման Հրահանգը» փաստաթղթի քննարկումը, առաջարկել զեկուցողին լրամշակել այն և ներկայացնել Խորհրդի հաստատմանը:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման ընտրանքային եղանակների կիրառման հայեցակարգին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ա. Շաբոյանը/

Նշվեց, որ Հայեցակարգի նպատակն է ընտրանքային մեթոդներով տվյալներ հավաքագրել բիզնես ռեզիստրի բազան լրացնելու համար, որն իր հերթին հիմք է հանդիսանալու ընտրանքային հետազոտությունների գլխավոր համակցությունները ձևավորելիս:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ա. Չիլինգարյան – հարկ է, որ յուրաքանչյուր առանձին դեպքի համար մշակվի առանձին մեթոդաբանություն համապատասխան ստորաբաժանումների կողմից և մասնակցությամբ, այդ թվում՝ ՀՀ ՎՊԽ համապատասխան անդամի:

- փաստաթղթին հարկ է ավելացնել պատկերային սխեմա:
- փաստաթուղթը դարձնել ավելի պարզ և հասկանալի հանրության համար:
- հարկ է կապակցված լինի այլ փաստաթղթերի, մասնավորապես՝ վիճակագրական աշխատանքների ծրագրի հետ:
- տեքստը ձևակերպել ոչ թե առաջարկելու, այլ սահմանելու ենթատեքստով:
- ով է իրականացնողը՝ ՀՀ ԱՎԾ կենտրոնական ապարատը, առանձին ստորաբաժանումը, մարզային գործակալությունը:
- «Հայեցակարգ» բառի փոխարեն հարկ է օգտագործել «Կարգ»:
- ավելացնել մի շարք տերմինների բացատրություն

Որոշեցին՝ հիմք ընդունելով ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները, առաջարկել զեկուցողին փաստաթուղթը Խորհրդի քննարկմանը ներկայացնել լրամշակումից հետո:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հիմնական և ոչ հիմնական գործունեության տեսակների որոշման կանոններին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ա. Շաբոյանը/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բիզնես ռեզիստրի տվյալների բազայի ցուցանիշներից են գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակները անհրաժեշտ է ունենալ դրանց որոշման կանոնները:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան – հաշվի առնելով ներկայացված փաստաթղթի անմիջական կապը նախորդների հետ, հետաձգել քննարկումը և վերադարձնել լրամշակման:

Որոշեցին՝ հետաձգել «Հիմնական և ոչ հիմնական գործունեության տեսակների որոշման կանոններ» փաստաթղթի քննարկումը և առաջարկել զեկուցողին այն Խորհրդի քննարկմանը ներկայացնել լրամշակումից հետո:
/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2001թ. ապրիլի 28-ից մայիսի 16-ը Թեհրանում (Իրան) կայացած «Ընտրանքի մշակում և կիրառում» թեմայով սեմինարի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գյուրջյան/

5.2 Հաշվետվություն TACIS ծրագրի «Հրապարակումներ և տարածում» նախագծի շրջանակում ք. Թբիլիսի 2001թ. ապրիլի 30-ից մինչև մայիսի 4-ը կայացած ուսումնական այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ն. Մուշեղյան/

5.3 Հաշվետվություն 2001թ. մայիսի 14-18-ը TACIS ծրագրի «Մարդահամար» նախագծի շրջանակում Հյուսիսային Իռլանդիայի NI-CO կազմակերպություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ս. Ներսիսյան/

5.4 Հաշվետվություն 2001թ. մայիսի 15-16-ը Լյուքսեմբուրգում կայացած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և նորանկախ պետությունների ու Մոնղոլիայի միջև «TACIS» ծրագրի շրջանակում վիճակագրության բնագավառում համագործակցության գծով կառավարող խմբի 7-րդ նիստի և մայիսի 17-18-ը TACIS –ի «Ռ-ազմավարական մենեջմենթ և ռազմավարական մտածողություն» խորագրով սեմինարի, ինչպես նաև սպառողներին վճարովի ծառայությունների մատուցման գծով մայիսի 21-27-ը Դ-անիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

5.5 Հաշվետվություն 2001թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 1-ը Բռնմամբում կայացած անգլերեն լեզվի ուսուցման դասընթացին մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Կարապետյան/

Որոշեցին՝ բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Այլ հարցեր

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան